

ՀՀ Վայոց Ձորի մարզպետ պրն Արարատ Գրիգորյանին
ՀՀ Վայոց Ձորի մարզ, 3601, ք. Եղեգնաձոր, Շահումյան 5.
Հեռ. (+374 281) 22522

Էլ. հասցե՝ vayotsdzor.press@mta.gov.am

Անկախ լրագրողներ՝ Վահե Օհանյանից
Թեմիլե Ենոքյանից

Ճանուցման հասցե՝ vaheohanyan@gmail.com,
yenogyantehmine@gmail.com,
Հեռ. 099858981, 093848476

Հարցում

Հարգելի պրն. Գրիգորյան,

Ցանկանում ենք տեղեկացնել Ձեզ, որ մեր թիմը ներկայումս աշխատում է «Ձոր գինը» վավերագրական ֆիլմի ստեղծման վրա: Խնդրում ենք տրամադրել մեզ ստորեվ ներկայացված հարցերի պատասխաններն ու տվյալները:

1. 2020 թվականի պատերազմից հետո Վայոց Ձորի մարզի սահմանամերձ դարձած համայնքներում որքա՞ն գումար է ծախսվել սուբվենցիոն ծրագրերով խմելու և ոռոգման ջրի համակարգի արդիականացման համար:
2. Որքա՞ն է գնահատվում Վայոց Ձորի մարզում ջրային պաշարների կորուստները և որո՞նք են դրանց պատճառները վերջին 10 տարիների ընթացքում:
3. Ի՞նչ կոնկրետ քայլեր է ձեռնարակվում ներկայումս Ձեր մարզում ջրային ռեսուրսների կորստի ծավալները նվազեցնելու, ջրային ռեսուրսների կառավարման խնդիրները բարելավելու ուղղությամբ: Խնդրում ենք նշել գործողությունների պլան և ժամկետներ:
4. Բա՞նի ջրամաբար է նախատեսվում կառուցել առաջիկա 5 տարում Վայոց Ձորի մարզում:
5. Արյո՞ք ներկայումս եվ առաջիկա 5 տարիներին կառուցվող ջրամբարները կլուծեն ջրային ոլորտի խնդիրները, ջրային կառավարման եվ ջրային կորուստների խնդիրները:
6. Վայոց Ձորի մարզում գետերի ցամաքելու պատճառները որո՞նք են, որքա՞ն տոկոս են օգտագործում ՓՀԷԿ-երը, և հանքարդյունաբերական ընկերությունները:
7. Ի՞նչ փոփոխություններ են կրել Վայոց Ձորի մարզի ջրային պաշարները 2020 թվականի պատերազմից և 2022 թվականի սեպտեմբերի 13-14-ի Էսկալացիայից հետո: Եթե կրել են, ապա ինչպիսի՞ն են դրանք թվային արտահայտությամբ: Խնդրում ենք մատնանշել նաեվ առկա վտանգները, գնահատականները ջրային անվտանգության տեսանկյունից:

Հարգանքով՝

Վահե Օհանյան

Թեմիլե Ենոքյան

19.05.2023

